ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 փետրվարի 2025 թվականի N 128-Ա

«ՎԵՐԻՇԵՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆԱՏԱԼՅԱ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի N 129-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ, 8-րդ կետերը և Ն. Հակոբյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ ե մ.

2024թ. փետրվարի 25-ից լուծել «Վերիշենի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նատալյա Հակոբյանի հետ 2021 թվականի մայիսի 4-ին կնքված N 12 աշխատանքային պայմանագիրը, գործողության ժամկետը լրանալու կապակցությամբ, նրան նշանակելով նույն կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

2025-02-24 16:52:37 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2025թ. փետրվարի 24
ք. Կապան